

Արագածոտնի մարզպետ
պարոն Աշոտ Միմոնյանին

ՀՀ քաղաքացի Արման Արմենի Գասպարյանից
Հասցե՝ ք. Երևան, Ավան, Թումանյան թղմ., 6/3 շ., բն. 12

Հեռախոսահամար՝ 094934488

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Միմոնյան,

Ես՝ հանդիսանալով Լուվենի Գաթոլիկ Համալսարանի ասպիրանտ ուսանող
(քաղաքացիությունը՝ Հայաստանի Հանրապետություն), զբաղվում եմ Հայաստանի
Հանրապետությունում համայնքների մակարդակով կրթության և ճանապարհաշինության
ծառայությունների մատուցման ուսումնասիրությամբ: Վերոհիշյալ հետազոտության
ընթացակետերում ցանկանում եմ մարզպետարանին հարցում ուղարկել՝ հետևյալ ավյալները
ձեռք բերելու նպատակով:

- համայնքների մակարդակով կրթության և ճանապարհաշինության ոլորտներում
(ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների և կամուրջների կառուցում և
պահպանում) 2014 թվականին իրականացված ծախսեր,
- համայնքների մակարդակով կրթության ոլորտին վերաբերող 2014 թվականի
վիճակագրական տվյալներ, ներառյալ՝ կրթական հաստատությունների քանակ,
դրանց վիճակ, կրթական հաստատությունների աշխատողների քանակ,
աշակերտների քանակ և ցանկացած այլ վիճակագրություն, կրթական
հաստատությունների տեխնիկական համալրվածության աստիճան և ցանկացած այլ
վիճակագրություն, որ կվերաբերեր կրթական ծառայությունների տրամադրմանը,
- համայնքների մակարդակով ճանապարհաշինության ոլորտին վերաբերող 2014
թվականի վիճակագրական տվյալներ, ներառյալ՝ համայնքային և միջհամայնքային
ճանապարհների, երկարություն, դրանց որակ, համայնքներում վերանորոգված
ճանապարհների ընդհանուր երկարություն և ցանկացած այլ վիճակագրություն, որ
կվերաբերեր ճանապարհաշինական ծառայությունների տրամադրմանը և որակին:

Հարգանքով՝

Արման Գասպարյան

Երբ	
«Արագածոտնի մարզպետարան»	
աշխատակազմի շտաբայարու-	
թյան ընդհանուր բաժին	
01	10
2018 թ.	
Մուտք № 7655-18	



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

0201 ք. Աշտարակ, Վ. Պետրոսյան 4, Հեռ/Ֆաքս (+374 232) 3 38 35

_____ N _____

ՀՀ Երևան քաղաքի բնակիչ
Արման Գասպարյանին

ՀՀ Արագածոտնի մարզպետին հասցեագրած Ձեր 01.10.2018թ գրության կապակցությամբ Ձեզ ենք տրամադրում ՀՀ Արագածոտնի մարզում 2014թ. ճանապարհաշինության և կրթության ոլորտներում իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

Առդիրը կցվում է:

Հարգանքով՝

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ճանապարհաշինություն

ՀՀ 2014 թ. Պետական բյուջեով Արագածոտնի մարզի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների համար նախատեսվել է 97.144.0 մլն. դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում Արագածոտնի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվել է 332.4կմ՝ 66.6 մլն դրամ արժեքով ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 49.5 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ՝ 30.544.0 մլն դրամ արժեքով:

ՀՀ 2014 թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ Արագածոտնի մարզում իրականացվել են՝

1. 2014 թ պետ/բյուջեով մարզում կատարվել է 113 մլն դրամի վերանորոգում (մոտավորապես 17.000քմ)
 - .Կարբի համայնքի ներհամայնքային ճանապարհ՝ 30.350.0 պետ/բյուջե, աշխատանքները ավարտված են:
 - .Բյուրական համայնքի ներհամայնքային ճանապարհ՝ 31.350.0 պետ/բյուջե, աշխատանքները ավարտված են:
 - .Ուշի համայնքի ներհամայնքային ճանապարհ՝ 31.350.0 պետ/բյուջե, աշխատանքները ավարտված են:
 - .Կարմրաշեն համայնքի ներհամայնքային ճանապարհ՝ 7.476.0 պետ/բյուջե, աշխատանքները ավարտված են:
 - .Թալին համայնքի ներհամայնքային ճանապարհ՝ 17.765.0 պետ/բյուջե, աշխատանքները ավարտված են:
2. Պետ/բյուջեով վերանորոգվել է «Ամբերդ >> պատմամշակութային համալիրի խաչմերուկից մինչև «Արագած» բարձրադիր դիտակայան ընկած 13.4 կմ երկարությամբ ճանապարհը, որի արժեքը կազմել է 66.584.400 դրամ:

Կրթություն

1.2014-2015 ուսումնական տարում մարզի 119 հանրակրթական դպրոցի առաջին դասարան է ընդունվել 1700 աշակերտ: Մարզում ձևավորվել է 1212 դասարան՝ 16 593 աշակերտով: 2014-2015 ուսումնական տարում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն ընդգրկվել են մարզում գործող Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոց, որտեղ կոմպլեկտավորվել է 9 դասարան՝ 49 աշակերտով, առաջին դասարան է հաճախել 5 աշակերտ

2. ՀՀ Արագածոտնի մարզում գործում է համայնքային ենթակայության 31 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որտեղ ձևավորվել է 87 խումբ՝ 2517 երեխայով, որոնցից 41-ը ազգային փոքրամասնության երեխաներ/եզդի/:

3. ՀՀ կրթության և գիտության նախարարի 23.06.2014թ. N678-Ա/Ք հրամանով Աշտարակի թիվ 3 հիմնական և Աշտարակի թիվ 5 ավագ դպրոցներն ընդգրկվել են ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկում: Աշտարակի թիվ 3 հիմնական դպրոցում 11 աշակերտի համար իրականացվում է ներառական կրթություն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 6 երեխայի հետ տարվում է տնային ուսուցում:

4. ՀՀ Արագածոտնի մարզի 32 հանրակրթական դպրոցում գործում է նախակրթարան՝ 513 երեխայով:

5. 2014 թվականի սեպտեմբեր ամսից մարզի 46 հանրակրթական դպրոցի տարրական դասարանների 2871 աշակերտ միացել է ՄԱԿ պարենի համաշխարհային <<Դպրոցական տաք սնունդ>> ծրագրին:

6. 2014 թվականին բոլոր դպրոցներն ապահովված են ինտերնետային կապով, դպրոցներում առկա է 836 համակարգիչ և 707 համակարգչային տեխնիկա: